



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

9(47.925)

4-30



05 OCT 2011

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

[illegible]

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1981

Նվիրում եմ կայուն բաղձ-
վիկ, հայկական բրիգադի ա-
նաջին մարտական կոմիտեի
մարտական գիտելու ընկած
Լ. Ի. Պ. Ա. Բ. Ե. Ս. Ե. Ս. Ե. Ս.
հիմնականին

Հ. Ե. Ղ. Ի. Ե. Ղ.



4964
39

g

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Պատերազմը քաղաքականության շա-
րունակությունն է»:

(Լենին)

«Վորպեսգիտությանը (այսինքն բուր-
ժուազիայից—Ո. Վ.) խլենք հարձակվելու
հնարավորությունը, պետք է զրկենք
նրան պաշտպանության միջոցներից,
պետք է վռն միայն սեղմել կոկորդը,
այլև խեղդել»:

(Կարլ Մարքս)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԲԵՂԱՔԱՆԻ ՊՐՈԹԵՍՏԱՆԸ

Քաղաքացիական պատերազմը դասակարգային
կռվի ամենասուր տեսակն է. այնտեղ վճռվում է հա-
կոտնյա դասակարգերի բախտը, պրոլետարիատը և
գյուղացիական մասսաները պայքարում են բուրժուա-
զիայի դեմ, վորոշվում է այդ դասակարգերի կյանքի
և մահու խնդիրը: Այդպես եր քաղաքացիական պա-
տերազմը նաև Հայաստանում, չնայած նրա առանձնա-
հատկություններին: Սկսած 1920 թ. մայիսյան ապրս-
տամբությունից, այլև Հայաստանի խորհրդայնացման
և քաղաքացիական պատերազմի ընթացքում—կատար-
վում է մասսաների անընդհատ հեղափոխականացման
պրոցեսը, նրանց ազատագրումը նացիոնալիստական
տրամադրություններից, մասսաների քաղաքական և

դասակարգային ինքնագիտակցութեան գալը, դեպի
պրոլետարիատի դիկտատուրայի և խորհրդային իշխա-
նութեան գաղափարին հարելու պրոցեսսը:

Վորժնեք ելին այն արտաքին և ներքին պայման-
ները, վոր պայմանավորեցին յերկրի քաղաքական
անկախութեանը, հեղափոխական ճգնաժամը, մաս-
սաների պայքարը ռազմատենչ հայկական բուրժուա-
զիայի և նրա կուսակցութեան—Դաշնակցութեան դեմ
և իշխանութիւնը հանձնեցին բանվորներին ու գյու-
ղացիներին: Մասսաների հեղափոխականացման հիմ-
նական գործոններից մեկը հանդիսացան այն անվերջ
արկունահեղ պատերազմները, վորոնք մղվեցին թշուր-
քիայի և հարևան ժողովուրդների դեմ իմպերիալիս-
տական պատերազմից հետո: Դաշնակների տիրապե-
տութեան շրջանը, վորը տևեց $2\frac{1}{2}$ տարի (1918 թ.—
1920 թ.), անվերջ պատերազմների մի շրջան էր, վոր
յերկրը հասցրեց ծայրաստիճան քայքայման և աղ-
քատութեան:

Այդ պատերազմները հիմնականում կապված են
անգլո-ֆրանսիական իմպերիալիստական բորենիների
կողմից Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում տա-
րած քաղաքականութեան հետ:

Հոկտեմբերյան հեղափոխութունն ամենաուժգին
հարվածը հասցրեց ռուսական իմպերիալիզմին և նրա
զաղութային ու ռազմական քաղաքականութեանն Արե-
վելքում: Արևելքի և Անդրկովկասի հեղեմոնիան անց-
նում է անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի ձեռքը:
Թշուրքիայի ազգային-ազատագրական շարժումն սպառ-
նում է խախտել այդ հեղեմոնիան՝ վճռական ճա-
կատներից մեկում և Անգլիային ու Ֆրանսիային զըր-

կել իրենց շուկաներից: Մյուս ավելի համեղ պատառը
Բազլի նավթն էր: Իր շահերի համար մղվող պայքա-
րում անգլո-ֆրանսիական իմպերիալիզմն Անդրկով-
կասը դարձնում է իր պլացդարմը: Դաշնակների ոգ-
նութեամբ իմպերիալիստները Հայաստանը դարձնում
են բազա՝ Արևելքում իրենց նվաճողական քաղաքա-
կանութիւնն իրագործելու համար: Հայաստանը դառ-
նում է պայքարի գործիք Թշուրքիայի դեմ (դաշնակ-
ների պատերազմները 1918 թ. և 1920 թ.): Դաշնակ-
ցութեան կուսակցութիւնը դառնում է անգլո-ֆրանս-
սիական իմպերիալիզմի անմիջական գործակալու-
թիւնը:

Սակայն իմպերիալիստական քաղաքականութիւնը
սերտորեն համընկնում էր ռազմատենչ հայկական
բուրժուազիայի գործակալութեան — Դաշնակցութեան
քաղաքականութեան հետ: Անցյալում հայկական բուր-
ժուազիայի առանձնահատկութիւնն այն է լինել, վոր
կողմորոշվելով դեպի իմպերիալիստների այս կամ
այն խմբավորումները, հարմարվելով նրանց, հենվե-
լով նրանց վրա, աշխատել է ձեռք բերել գեր պատառ
Անդրկովկասում և Արևելքում: Իմպերիալիստական պա-
տերազմի և Հոկտեմբերյան հեղափոխութեան հետևան-
քով հայկական բուրժուազիան զրկվելով իր շուկա-
ների մեծ մասից, խցկված լինելով Հայաստանի նեղ
սահմանների, «արարատյան կորիդորի» մեջ, կատա-
ղած դեռ ու դեռ է նետվում, հայտաբերում է ուժեղ
ազդեցիկութիւն՝ իր համար յեղք գտնելու համար:
Այստեղից էլ բղխում է այն անվերջ պատերազմների
քաղաքականութիւնը, վոր մղում էր Թշուրքիայի և
մյուս ժողովուրդների դեմ: Այդ էր պատճառը, վոր

մանր բուրժուական և գյուղացիական մասսաները վերամշակման եյին յենթարկվում՝ «միացյալ և անկախ» «մեծ Հայաստանի», «ծովից ծով Հայաստանի» և այլ տեսակ Հայաստանի պատմական, ազգային սահմանները պահանջող լոզունգների վոզով:

Սակայն չի կարելի ըմբռնել դաշնակները ամբողջ քաղաքականությունն առանց հաշվի առնելու այն հատուկ ռեակցիոն դերը, վոր նա խաղացել է Անդրկովկասում: Այն պաշարում, վորը մղում էր ռուսական ցարիզմը Արևելքի ժողովուրդներին խեղդելու համար, հալկական բուրժուազիան գտնվում էր առաջամարտիկների շարքերում: Սերտորեն կապված լինելով ռուսական բուրժուազիայի հետ, նա իր կապերը նրանից չկտրեց նաև Հոկտեմբերից հետո, քաղաքացիական պատերազմի ընթացքում ռուսական սպիտակ գվարդիականության հուսալի բազան և թիկունքը հանդիսացավ: Ահա թե ինչու սպիտակ գվարդիականների պարտութունը խիստ ուժգին հարվածեց դաշնակների քաղաքական կայունությանը և ազատեց հեղափոխական տարերքը՝ Հայաստանում:

Դաշնակների պատերազմները վերջին հաշվով քայքայում էին աշխատավոր մասսաներին, պահանջում էին անհամար մարդկային զոհեր, Հայաստանը դարձնում էին դադթականների և վորրերի լեղիլը, որյեկտիվ նախադրյալներ ստեղծելով մատսաների հեղափոխականացման համար: Սակայն մասսաների դրությունը վատթարանում էր նաև շնորհիվ այն դաժան շահագործման, վորին յենթարկվում էին աշխատավորները լեղիլի ներսում: Անգլո-ֆրանսիական խմբերիալվմը Հայաստանը դարձրել էր վոշ միայն պլաց-

դարմ իր եքսպանսիայի համար Արևելքում, ալիև նա Հայաստանը դարձրել էր իր գաղութը: Նա չեր խորշում ալն տնտեսական վշրանքներից, վորոնք մնացել էին Հայաստանում. արտահանում էր բամբակ, բուրդ, սպիրտ, գինի, գորգեր և դրանց փոխարեն մատակարարում էր իմպերիալիստական պատերազմից մնացած իր մնացորդները՝ խտացրած կաթ, տյուկեր և, վոր գլխավորն է, ռազմական հանդերձանք:

Յերկրի ներսում հուսալի թիկունք ստեղծելու, ինչպես և աշխատավոր մասսաների ուշադրությունը ներքին աղետներից և հեղափոխական շարժումից հեռու պահելու նպատակով դաշնակները դիմում էին բոլոր վոշ հալ ժողովուրդների «մաքման» խայտառակ գործին, այդ իրագործելով առաջին հերթին թյուրքերի նկատմամբ. այդպիսով արտաքին պատերազմներին ավելացնում էին նաև ներքին ազգամիջյան պատերազմները: Այդ պատերազմները խորացնում էին մասսաների քայքայումը, գյուղացիությունից պահանջում էին նրանց ուժերից վեր հարկեր և սպեկուլյանտների, կուլակների, առևտրականների, ինչպես և խմբապետներից և պարլամենտական ու դաշնակցական գործիչներից առաջացող «կալվածատերերի» դատակարարի առաջ առպարեզ էին բացում մասսաների դաժան շահագործման համար: Յերկիրը կանգնած էր առաջ ալն ել թույլ արդունաբերության և գյուղատնտեսության կատարյալ քայքայման հանդեպ: Արդյունաբերական ապրանքների և անդամթերքի (հաց) բացակայության պատճառով յերկիրը գալարվում էր սովի ճիրաններում: Աշխատավոր մասսաները դրվել էին ֆիզիկական վոշնչացման և ալլասերման

վտանգի առաջ: Թվում էր, թե յեւք չկար: Սակայն լեւքը գտնվեց: Մասսաները 1920 թ. մայիսին խոսեցին հեղափոխական լեզվով, վորովհետև «ամեն մի հեղափոխութուն նշանակում է ճգնաժամ և այն ել շատ խորը ճգնաժամ, ինչպես քաղաքական, այնպես ել տնտեսական ինքնըստինքյան: Այդ կախված է պատերազմի ստեղծած ճգնաժամից» (Լենին):

1920 թ. նախորդակին սոցիալ-քաղաքական դրութունն այնպես էր, վոր բավական էր մի փոքրիկ հարված, վորպեսզի մասսաները պայքարի յեւքյին ֆաշիստական Դաշնակցութուն կուսակցության դեմ: Յեւ պատահական է, վոր Դենիկինի ջարդը և Ադրբեջանի խորհրդայնացումը լցրին տանջված մասսաների համբերության բաժակը, և նրանք զենքը ձեռքին դուրս լեկան իշխանության դեմ: Թյուրքիայի դիմադրող պատերազմում պարտութուն կրելը (1920 թ. վերջում) ստեղծեց իշխանության սոցիալ-քաղաքական ճգնաժամ և դաշնակներին դուրս շարտեց պատմության բեմից:

Հայաստանի Կոմկուսի հին նացիոնալ-ուկրոնիստական դեկավարության մեջ կային այնպիսի ներկայացուցիչներ, վորոնք, որինակ, Հայաստանի պրոլետարական մասսաների մայիսյան ապստամբությունը համարում էին ավանտյուրա. չհասկանալով հեղափոխության իմաստն ու բնույթն ընդհանրապես և Հայաստանում մասնավորապես, նրանք որչեղտիվորեն ջուր էին լցնում Դաշնակցության իդեոլոգիայի ջրաղացին: Կային և այնպիսիները, վորոնք կարծում էին, թե 1920 թ. նոյեմբերին դաշնակները կամավոր կերպով իշխանությունը գիշեցին բանլորներին և գյու-

ղացիներին: Այդ կարծիքները հերքելու համար պետք է հարցն այսպես դնել՝ կար արդյոք հեղափոխական սիտուացիա Հայաստանում 1920 թ. և իթե այո, ապա վորոնք են այն ամենագլխավոր հատկանիշները, վորոնք պայմանավորեցին հեղափոխական ճգնաժամը յերկրում:

Լենինը ցույց էր տալիս լերեք ամենագլխավոր հատկանիշներ, վորոնք բնորոշում են հեղափոխական սիտուացիան.

1. «Անհնարինութուն տիրող դասակարգի համար՝ անփոփոխ կերպով պահպանելու իր տիրապետությունը. — «Վերնախավի» այս կամ այն ճգնաժամը, տիրող դասակարգերի քաղաքականության ճգնաժամը, վորը ճեղքվածք է ստեղծում, վորտեղ ճնշված մասսաների անբավականությունն ու վրդովմունքն է պոռթկում: Հեղափոխության հարձակման համար, սովորաբար, բավական է, վոր «ստորին խավերը չցանկանան», այլ պահանջվում է նույնպես, վոր «վերնախավը չկարողանա կռաւարել» հին ձեռով:

2. Ճնշված դասակարգի կարիքների և թշվառությունների սովորականից ավելի սրվելը և

3. Մասսաների ակտիվության զգալի բարձրացումը՝ վերոհիշյալ պատճառների շնորհիվ:

1920 թ. մենք վոչ միայն ունեյինք, պրոլետարական և աշխատավոր մասսաների կարիքների և թշվառությունների սովորականից ավելի սրում, այլև ահնբախ էր այդ մասսաների ուղղակի մահացումն ու վոչնչացումը: Անթիվ արտաքին և ներքին «ազդամիջյան» պատերազմները կուլակների և սպեկուլյանտների կա-

տաղի շահագործման հետ միասին Հայաստանը դարձրել էլին գաղթականների և վորքերի յերկիր:

Հայաստանի պրոլետարական և աշխատավորական մասսաների բոլոր խավերը վերին աստիճանի դժգոհ ելին դաշնականի իշխանութունից: Այդ խավերն արագորեն հեղափոխականանում ելին քաղաքական, տնտեսական և ռազմական հարվածների տակ: Հայաստանի բանվորութունը բազմաթիվ էր և շնորհիվ արդյունաբերական ձեռնարկութունների (Ալլաճվերդու և Ղափանի հանքերը, մի շարք փոքր գործարաններ) փակման բանվորները փողոց ելին շարավեր: Միայն յերկաթուղում և Յերևան քաղաքում դեռևս պահպանվել ելին մի քանի հազար բանվորներ, վորոնք յերկրի եկոնոմիկայի և յերկաթուղային տնտեսության քաջ քայման հետևանքով յենթարկվում էլին դաժան շահագործման: Բազմի կոմունայի անկումից հետո—բավականաչափ բանվորներ յեկել էլին Հայաստան: Նրանք էլին հանդիսանում ավելի հեղափոխական ուժ և քաղաքում ու գյուղում գյուղացիության մեջ տարածում ելին բայլելիքի և խորհրդային իշխանության դադափարները: Բազմաթիվ շրջաններում դաշնականների իշխանության դեմ կազմակերպված ապստամբություններում (Զանգեզուր, Ղազախ, Լենինական և այլն) հենց նրանց և պատկանում առաջավոր դերը:

Աշխատավոր գյուղացիութունը խիստ դժգոհ էր դաշնականների ամբողջ քաղաքականութունից, վորը հանուն անգլո-ֆրանսիական խմբերի ավելի և հայկական բուրժուազիայի նրանց դարձնում էր թնդանոթի միտ Յեթե դրան ավելացնենք գյուղատնտեսության «դեգրադացիան», արդյունաբերական ապրանքների

բացակայությունը, կուլակ-աշխարհակերներ և սպեկուլյանտների շահագործումը, աշխատավորության ուսերին ծանրացած հարկերը, հիվանդությունները և սովը, ապա պարզ կլինեն մասսաների դժգոհության և հեղափոխականացման պատճառները: Արդեն 1920 թ. համալրյա թե բոլոր շրջաններում տեղի չեն ունենում գյուղացիական ապստամբությունների պոթկուսներ կոմկուսակցության ղեկավարությամբ (Լենինական, Նոր-Բալազետ, Զանգեզուր և Ղազախ):

Բանակն ամբողջովին անդրադարձնում էր աշխատավոր գյուղացիական մասսաների տրամադրությունը: Բայց նա ավելի հեռու չեր գնում, վորովհետև նա իր կաշվի վրա փորձել էր դաշնականների պատերազմի երի «հրաշալիքները»: Այդ պայմանները նախադրյալներ էլին ստեղծում կոմբիլժների աճման համար բանակում, և դրանց ազդեցությունը հետզհետև աճում էր զինվորների մեջ: Շատ ապստամբություններում ամենաակտիվ դեր խաղացողը բանակն էր (Սարիղամիշ, Ղարս, Լենինական): Ուրիշ շրջաններում զորքերի մեջ չեղել են ուժեղ տատանումներ (Ղամարլու): Բանակում խիստ զարգացած էր դասավորությունը, վորով զինվորներն արտահայտում էլին իրենց դժգոհությունը: Վորքան ավելի յեր ուժեղանում արտաքին վտանգը, այնքան մեծանում էր մոբիլիզացիայի յենթարկված աշխատավորության թիվը և զրանով իսկ թուլանում էր բանակի ներքին կայունությունը: Միայն խմբապետների և մաուզերիստների վոչ կանոնավոր բանակը, վորը կազմված էր ապաղասակարգայնացած տարբերից, ուժեղ հենաբան էր դաշնականների համար և դա չեր զլլխավորապես ողտադրվում թիկունքի խաղաղացման

և հեղափոխական շարժման ճնշման համար նույնպես և բանակում:

Դաշնակների բանակի ներքին կարգապահութիւնը նույնպես ուժեղ ֆակտոր եր հանդիսանում զինվորների դժգոհութեան համար: Դաշնակցական ազգային բանակը, վորն ստեղծվել եր ցարական բանակի քայքայման հետևանքով, չուրացրել եր ֆեոդալական-ինքնակալական հասարակարգի բոլոր տրագիկաները: Սպաները ծեծում և ծաղրանքի էյին լինթարկում զինվորներին, նրանք ամբողջովին կտրված էյին զինվորներից, վերջիններև դարձրել էյին «անասուններ», և ալլ բոլորը անտանելի չեր դարձնում բանակի ներքին ռեժիմը: Բանակի ներքին կալուսութիւնը վերջնականապես խախտվեց 1920 թ մալխյան ապստամբութեան և հեղափոխական շարժման հետևանքով: Զինվորների դժգոհութիւնը սպաների դեմ դրսևորվեց մանավանդ 1920 թ., յերբ «ազգամիջյան պատերազմների» հետևանքով նրանք ականատես յեղան այն հրեշալոր թալանին, վորը կատարվում եր սպաների, խմբապետների և ուրիշների կողմից: «Հրամանատարական վերնաշերտի» և զինվորների—«ստորիններևի» միջև յեղած լիակատար կտրվածութիւնը, չհնազանդվելը, դասալքութեան ուժեղ զարգացումը վերջնականապես խորտակեցին զորքերի մարտունակութիւնը: Ռազմա-դաշտային դատարանների կազմակերպումը և զինվորների գնդակահարումը ճակատներում, արդեն ի վիճակի չէին կասեցնելու բանակի անզուսպ քայքայումը: Այդպիսով 1920 թ. զգալի չեր ու պարզ աշխատավորական մասսաների (բանվորների, գյուղացիների և բանակի) հեղափոխական ակտիվութիւնը:

Հայաստանի կոմմունիստական կուսակցութիւնը վորը կազմակերպվել եր 1918 թ., կարողացավ կարճ ժամանակաւնթացքում իր բջիջները տարածել Հայաստանի մի շարք հիմնական շրջաններում: Բանվորների, գյուղացիութեան մեջ և բանակում կատարվող աշխատանքը բավականաչափ հաջող եր ընթանում: Յեվ 1920 թ. ընթացքում տեղի ունեցած բոլոր ապստամբութիւններում ղեկավար դերը կատարում էյին կուսակցական բջիջները, մասսաներին վոգեւորելով դաշնակների դեմ, անողոք պայքար մղելու համար: Մալխյան ապստամբութիւնից հետո, դրված լինելով ընդհատակա դրութեան մեջ, կորցրած լինելով լավագոյն կադրերը, կուսակցական կազմակերպութիւններն սկըսեցին աստիճանաբար իրենց կարգի բերել՝ իշխանութեան դեմ նոր հարձակում կազմակերպելու համար:

Յեվ վերջապես մասսաների հեղափոխական շարժման և դաշնակների ռազմական պարտութեան ազդեցութեան տակ հասավ կառավարական իշխանութեան ճգնաժամը: 1920 թ. մալխյան ապստամբութիւնից հետո դաշնակների կուսակցութիւնն արդեն իվիճակի չեր «սովորական» մեթոդներով ղեկավարելու յերկիրը: Տեղի յե ունենում ապաւարտի ուժեղ ֆաշիզացիա, «պարլամենտը» դադարում և գոյութիւն ունենալուց, ամբողջ իշխանութիւնը հանձնվում և Դաշնակցութիւն կուսակցութեան բոլորոյի ձեռքը: Հեղափոխական բանվորների և գյուղացիութեան նկատմամբ գործադրվող ռեպրեսիաները և եկզեկուցիաները, ինչպես և կոմմունիստների գնդակահարութիւնները, հասնում են չտեսնելված չափերի: Աշխատավորութիւնը լինթարկվում և արյունահեղ ուղիներով: Յերկրում տեղի յեն ունե-

նում դաշնակների «հրոսակախմբերի» (խմբապետների և մառազների ստաների) լիակատար նախճիրը: Ռազմական պարտութունից հետո դաշնակները գլուխները կորցրնում են, ստեղծվում է կառավարական իշխանության ճգնաժամ: Յերկիրն ապրում է անարխիա, այլևս կայունութուն չկա, իշխանութունն ընկնում է հոգեվարքի մեջ:

Այդ պայմաններն ուժեղացնելով հեղափոխական սիտուացիան, պայմանավորեցին իշխանության հեշտ անցումը Հայաստանի բանվորների և գյուղացիության ձեռքը 1920 թ. նոյեմբերին: Սակայն այդ անցքերի վրա վճռական ազդեցություն ունեցան սպիտակ-գվարդիականների ջախջախումը Ռուսաստանում և Ադրբեջանի խորհրդայնացումը: Դաշնակների դեմ մղվող պայքարն ըստ ելույթյան պայքար եր նաև անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի դեմ, իսկ այդ պայքարն աշխատավոր մասսաների համար հնարավոր դարձավ միայն շնորհիվ Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժման՝ հաստատելով Լենինի խոսքերն այն մասին, վոր «Արևելքի ժողովուրդների հեղափոխական շարժումը ներկայումս կարող է հաջող լուծում ստանալ վոչ այլ կերպ, քան այն հեղափոխական պայքարի անմիջական կապակցությամբ, վորը մղում եր խորհրդային հանրապետությունը միջազգային իմպերիալիզմի դեմ»: Ժառանգություն ստանալով քայքայված և աղքատ լերկիրը՝ խորհրդային իշխանությունը հանդիպեց խոշոր դժվարությունների լերկրի շինարարության և նորմալ կյանք ստեղծելու գործում: Այդ հանգամանքը դաշնակներն ոգտագործեցին մեր դեմ ապստամբություն պատրաստելու համար: Դաշնակները ջախջախված էին,

բայց դեռ վոչնչացված չէին: Նրանք դեռ պահպանում էին կիսալեզալ գոլություն: Նմբերը և մառազերիստները ցրված էին շրջաններում, բայց դեռ չէին զինաթափված: Լայն մասսաների աչքում վարկաբեկված դաշնակները հենվելով խմբերի վրա, ոգտվելով խորհրդային իշխանության դժվարություններից՝ պատրաստում են զինված յելութ: Նրանց հաջողվում է 2 և կես ամսից հետո (1921 թ. փետրվարին) կազմակերպել զինված ուժ, կրկին գրավել Յերևանը և այդպիսով սկսել քաղաքացիական պատերազմը: Լենինը դեռ 1915 թվին ասել է.

«2ի կարելի ժխտել այն, վոր առանձին դեպքերում, իբրև բացառություն, որինակ՝ մի վորեք փոքրիկ պետություն մեջ, այն ժամանակ, լերը հարևան մեծ պետությունն արդեն կատարել է սոցիալական հեղափոխություն, հնարավոր է, վոր բուրժուազիան խաղաղ կերպով իշխանությունը զիջի, լեթե նա համոզվի, վոր դիմադրելն անոգուտ է, և գերադասի պահպանել իր գլուխը: Ավելի հավանական է, իհարկե, վոր նաև փոքր պետություններում սոցիալիզմը չիրականանա առանց քաղաքացիական պատերազմի»:

Հենց այդպես էլ պատահեց.

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԵՏԵՐԱԶՄԻ ՆՏԱՊՆԵՐԸ

Հայաստանի քաղաքացիական պատերազմն ունի յերկու ետապ—առաջին, մեզ համար ավելի դժվարին շրջանը Յերևանի անկման, դեպի խոր-վիրապ — Բուլոք-վեդիի գիծը նահանջելու շրջանն է մինչև Յերևանի կրկին գրավումը (1921 թ. փետրվարի 17-ից մինչև ապրիլի 2-ը): Յերկրորդը Դարալագյազի կռիվները

շրջանն է, մինչև դաշնականի վերջնական լիկվիդացիան Զանգեզուրում (1921 թ. ապրիլից մինչև հունիսը)։

Փետրվարի 15-ին ապստամբները (դաշնականները) լեռնք կետերում՝ Բաղգյառնի, Ալագյազի ստորոտներում և Նեշուլու գյուղում կենտրոնացնելով մոտ 1000 հետևակ, 600 ձիավոր, 12 զնդացիք և հենվելով Յերևանում գտնվող մատչելի ստաների վրա, անցնում են հարձակման Յերևանի վրա։ Յերևանի անկման նախորդակին դաշնականները ոգտվելով գիշերային մթից և լավ ծանոթ լինելով տեղանքին, լուսաբացին հարձակվում են Յերևանի վրա և յերեք ժամ տևող մարտից հետո գրավում քաղաքը։ Կարմիր զորամասերը՝ Աղբաշ գյուղի շրջանում գտնվող հայկական բրիգադը (2-րդ և 3-րդ զնդերը) Կոմունիստական ջոկատը, 178 զուգըր, 2 զրահագնաքցները, Բլազովիդովի եսկադրոնը և չորս մարտկոցներ յերկաթուղու գծով նահանջում են դեպի Շիրազլու—Արարատ կայարանը։ Կարմիր զորամասերն իրենց հետ տանում են միջանի շոգեշարժ և միջանի վագոն պարեն ու ուսումնական շատ սահմանափակ քանակությամբ։ Հայաստանի կառավարությունը (Հեղկոմը) նույնպես նահանջում է Արարատ կայարանը։

Բոյուք-Վեդի—Շիրազլու—Խոր-Վիրապ գծում բռնելով պաշտպանողական դիրք, կարմիր զորամասերը յերկու անգամ հարձակվում են Յերևանի վրա։ Ապրստամբները շեշտակի կերպով գրավելով Յերևանը, դադարեցնում են հարձակումը—իրենց զորքերը կաբգի բերելու և աշխատավոր գյուղացիներից թարմ ուժեր զորահավաքի յենթարկելու համար։

Մեր զորքերի առաջին հարձակումը (փետրվարի 25-ին) պսակվում է հաջողությամբ Յուվա գյու-

ղի տակ։ Մեր զորամասերը յետ շարտելով դաշնականի-րին՝ գրավում են Նորագավիթ—Աղբաշ գիծը։ Թշնամին թողնում է թնդանոթներ, զնդացիքներ և գինեմթերք։ Փետրվարի 27-ին դաշնականները մեզ ալդ դիրքերից յետ շարտելու համար զիմում են հակահարձակման, և սկսվում է կատաղի ճակատամարտ, վորը տևում է մի ամբողջ ուր։ Նորագավիթ գյուղի շրջանը յերեք անգամ ձեռքից ձեռք է անցնում, իվերջո մնալով մեր ձեռքում։ Հեթևյալ ուրը մենք սկսում ենք հարձակում Յերևանի վրա և մոտենում քաղաքի ծայրամասերին։

Չախջախված լինելով ճակատ առ ճակատ մղած մարտում և հաշվի առնելով մեր աջ թևի թուլությունը, դաշնականները նոր, ուժեղ զորամասեր են փոխաձգում դեպի Աղբաշ գյուղը, սպառնալով 2-րդ զնդին։ Բացի այդ դաշնականները կենտրոնացնում են մեր ձախ թևի-կույքում, Հաջի-Եյլաս գյուղի մոտ իրենց բանդաները։ Հրամանատարություն յարգադրությամբ մեր բուլոր զորամասերը գիշերով սկսում են նահանջել դեպի հին պաշտպանողական դիրք—Բոյուք-Վեդի—Խոր-Վիրապ։ Մի ուր մենք կանգ ենք առնում Իմանշալու գյուղի գծում, ուր կովի յենք բռնվում հակառակորդի առաջավոր մասերի հետ։ Նահանջի պատճառներից մեկն էլ այն էր, վոր կարմիր զորամասերը 5—6 ուր տեղանքնդհատ մարտերում շատ հոգնել էյին և հանգստի կարիք ունեյին։

Հետագա 7 ուրվա ընթացքում տեղի յեն ունենում փոքրիկ ընդհարումներ հակառակորդի հետ։ Դաշնականները մեր ուժերի վոչնչացման և պաշտպանողական յերտի ձեղքման նպատակով մարտի 8-ին անցնում են վճռական հարձակման, գլխավոր հարվածն ուղղելով

1964
39

գեպի Խոր-վիրապ — Քյուչուկ-վեդի (մեր ձախ թևին)։
Ջրահագնացքների կրակային ուղեւթյունը և մեր զորա-
մասերի հակահարվածը մեծ կորուստներ են պատճա-
ռում դաշնակիներին, նրանց մասամբ յետ շարանելով
Արաքս գետի մեջ։ Հակառակորդը թողնելով մեծ թվով
սպանվածներ և վիրավորներ՝ խուճապի մատնված նա-
հանջում ե։

Մարտի կեսերին պարզվում է (ռադիո-կապի մի-
ջոցով), վոր 11-րդ բանակի մեզ ուղեւթյան յեկող ջոկա-
տը դաշնակիներին յետ շարանելով՝ մի շարք պաշտպա-
նողական կետերից մոտեցել է Ներքին-Ախտալի շրջա-
նին։ Մեր հարվածները համաձայնեցնելու համար կար-
միր զորամասերը մարտի 14-ին ձեռնարկում են լեռն-
բորգ հարձակումը, իսկ մենք կռվով գրավելով Յուվան՝
հակառակորդին յետ ենք շարտում դեպի Աղհամգալու—
Աղբաշ գիծը։ Դաշնակիները հավաքելով իրենց ռեզերվ-
ները՝ անցնում են հակահարձակման և մարտի 15, 16 ու
17-ին մեր զբաղված շերտում տեղի յե ունենում ա-
բյուռահեղ ճակատամարտ։ Մասնակի հաջողութուններ
ունենալով մեր աջ թևում (Աղբաշում)՝ հակառակորդը
մեր ուժերի մեծ լարումով շարունակ յետ է շարտվում։
Վերջապես մարտի 19-ին իր բոլոր ուժերով վրա տա-
լով մեր աջ թևին, հակառակորդը մեզ յետ է մղում ու
գրավում Աղբաշը։ Շնորհիվ 3-րդ գնդի ռեզերվում զբա-
ղված գումարտակի և յերկու զրահագնացքների զոր-
ծողության, համարյա թե 200 քայլից գործող գնդա-
յիրների ուժեղ դնդակածման տակ մեզ հաջողվում է
յետ մղել հակառակորդին և վերականգնել նախկին դրու-
թյունը։ Անհարմար տակտիկական դրությունը (աջ
թևից սպառնացող վտանգը), մարդկանց կորուստը, զոր-

քերի հոգնածությունը 5—6 որ անդհատ տեղ մար-
տերի շնորհիվ, ռազմամթերքի պակասը, ինչպես և 11-րդ
բանակի հարձակման դանդաղումը կարմիր զորքերի
հրամանատարին հարկադրում են հրաման արձակել նա-
հանջի մասին։

Վոգևորված իրենց «հաջողութուններով», իսկ վոր
գլխավորն է, սեղմվելով Յերևանի վրա շարժվող 11-րդ
բանակի զորամասերի կողմից, դաշնակիները վորոշում
են ինչ էլ վոր լինի իրենց համար նահանջի ճանա-
պարհ բացել դեպի Դարալագյազ, Յերևանից հարկա-
դրված նահանջելու դեպքում։ Այդ նպատակով մարտի
22-ին Բոյուք-վեդի—Խոր-վիրապի վրա դաշնակիների
սկսած հարձակումը կրկին վերջանում է նրանց խոշոր
պարտությամբ։ Թողնելով մեծ քանակությամբ սպան-
վածներ ու վիրավորներ, ինչպես և զինք ու ռազմա-
մթերք, դաշնակիներն արագ կերպով յետ են քաշվում։
Դիմելով էլ վերջանում են դաշնակիների կողմից մեր
պաշտպանողական շերտի ձեռքման համար ձեռնարկ-
վող փորձերը։ Ապրիլի 2-ին 11-րդ կարմիր բանակը գրա-
վում է Յերևանը։

Դաշնակիների դեմ մղվող պայքարում մեզ խոշոր
ուղեւթյուն հասցրեց թյուրք պարտիդան Աբաս-Կուլի-
բեկը, վորը մեր հրավերով ներկայացավ իր հեծյալ և
հետակ խմբով։ 300 հոգուց բաղկացած «կարմիր թա-
րորը» մեզ համար հուսալի պատենչ հանդիսացավ, ա-
յաճովելով մեր թևն ու թիկունքը Դարալագյազում
դործող դաշնակ զորքերից։

Յերևանի գրավումից հետո Հայկական բրիգադը
խնդիր է ստանում ռեզերվել Դարալագյազ և վերջ
տալ աչնտեղի դաշնակցական բանդաներին։ Այդպիսով

սկսվում է քաղաքացիական պատերազմի 2-րդ շրջանը։ Ապրիլի 12-ին Հայկական բրիգադը յերկու սուբնով հարձակվում է Դարալագյազի վրա։ Կռվով վերցվում են՝ ապրիլի 14-ին Արփա գյուղը, 15-ին՝ Այնաձորը, ապա Քեշիշքենդը և Գնդեաղը, ուր և մեր զորքերն ամրանում են։ Յերկու ամիս (ապր. 15-ից մինչև հունիսի 15-ը) տևող մարտերը դադարում են, տեղի լին ունենում միայն հետախուզիչ մասերի աննշան մարտական գործողություններ։ Խորհրդային կառավարությունն իր ուղադրություններն ուղղում է Ձանգեղուրի վրա, վերստեղ այդ ժամանակ ստեղծվել եր դաշնակիների աշապես կոչված «Լեռնային Հայաստանի կառավարությունը»։ Խորհրդային կառավարությունը պատգամավոր և ուղարկում Ձանգեղուրն առանց արշունհեղությունների հանձնելու մասին բանակցելու համար։ Բրիգադի բարձր տարիք ունեցող կարմիր-բանակայինները զորացրվում են դաշտային աշխատանքների համար։ Ագտվելով զբաղմունքից՝ դաշնակիներն անսպասելի կերպով անցնում են հարձակման և մեր զորքերին յետ են մղում Դարալագյազից։ Մեր զորամասերի բավականաչափ զգոնությունը բացակայություն շնորհիվ դաշնակիները ճեղքում են մեր պաշտպանություն գիծը, և Հայկական բրիգադը Դարալագյազից նահանջում է դեպի Խաչիկ գյուղը (2-րդ գունդ), վերին Ղարախուղ ու Բաշ-Նորաշեն (3-րդ գունդ)։

Այդ հանգամանքը խորհրդային իշխանությունն ստիպում է արագացնել դաշնակիների լիկվիդացիան։ Ձանգեղուրում 11-րդ բանակի և Հայկական բրիգադի զորամասերը յերեք ուղղությամբ շարժվում են Ձանգեղուրի վրա։ Գլխավոր խնդիրը պետք է կատարել

Ղարաբաղ-Ձանգեղուրի գրուպան, վորը վերախմբավորման լենթարկվելով Ձանգեղուրի սահմանների մոտ՝ սպասում է կարգադրության։ Հայկական բրիգադը (2-րդ և 3-րդ գնդերը) խնդիր են ստանում գրավել Դարալագյազը և շարժվել դեպի Ձանգեղուրի սահմանները։ Յերրորդ (Նախիջևանի) ուղղությամբ գործում է 4-րդ Հայկական հրաձիգ գունդը և Հայկ. հեծգունդը։ Հայկական բրիգադը հունիսի 22-ին նորից գրավում է Արփա գյուղի շրջանը, հունիսի 20-ին՝ Քեշիշքենդը, 26-ին՝ Նոր-Փաշալուն, Գնդեաղը, իսկ հուլիսի 29-ին՝ Կուշչի-Բիրակի և Բաղարչաչի գրավումով հակառակորդը յետ է շարժվում Ձանգեղուր։ Հունիսի 30-ին Հայկական բրիգադի զորամասերը մոտենում են Սիսիանի շրջանին։

Ձանգեղուր-Ղարաբաղի գրուպան (82-րդ հետ. բրիգադը 124 առանձ. բրիգադը և 108 հեծգունդը) այն ժամանակ, յերբ Հայկ. բրիգադը մոտենում է Ձանգեղուրի սահմաններին, հուլիսի 2-ին ամբողջ ճակատով անցնում է հարձակման և գրավում Գորիս գյուղը։ Այդ ժամանակ մոտենում է նաև Հայկակ. հեծյալ գունդը։ Հեծգունդը հուլիսի 4-ին գրավում է Տաթեվը։ Հետագայում մարտական գործողությունները զարգանում են հետևյալ ձևով։ Ղարաբաղ-Ձանգեղուրի գրուպայի զորամասերը հուլիսի 7-ին գրավում են Ղափանը, հուլիսի 11-ին գնդի հետախուզությունը նկատում է, վոր Քյուրդքենդ գյուղի մոտ հակառակորդի զորքերն անցնում են Արաքսը և ուղևորվում Պարսկաստան։ Հուլիսի 13-ին առանց կռվի՝ գրավվում է Մեղրին։ Այգալիսով վերջանում է Ձանգեղուրի ուղի-բացիան և զբա հետ միասին նաև Հայաստանի քաղաքացիական պատերազմը։

3. ՔԱՂԱՔԱՑՈՒՄԻ ՊԵՏՏՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Դաշնականների ապստամբությանը և Յերևանի գերապետությանը սկսվում է քաղաքացիական պատերազմը Հայաստանում: Քաղաքացիական պատերազմն ընդգրկում է լեռնային շրջան. առաջին՝ ավելի դժվարին շրջանն սկսվում է Յերևանի համար մղվող պաշարում, ապա նահանջը և մինչև Յերևանի կրկին գրավումը (1921 թ. փետրվարի 18-ից մինչև ապրիլի 2-ը): Այդ ժամանակվա ընթացքում կարմիր զորամասերը յերկու անգամ հարձակվում են Յերևանի վրա: Յերկրորդ շրջանը՝ Դարալագյազի մարտերի շրջանն է, մինչև նրանց վերջնական լիկվիդացիան (1921 թ. ապրիլից մինչև հուլիս):

Փետրվարի 12—17-ի վճռական որերին Հայաստանի խ. իշխանություն պաշտպանություն հարցը դարձավ դաշնականների ապստամբության զինված ջախջախման հարց: Հայաստանի զորքերի հրամանատարը տեղեկություններ ստանալով, վրդաշնականները պատերազմում են հարձակման անցնելու Բաղլաբունու շրջանից, միջոցներ ձեռք առավ ալդ բանդաների վոչընչացման համար: Սակայն հրամանատարություն հիմնական սխալն այն էր, վրդաշնականները դանդաղ կերպով կենտրոնացրեց զլխավոր մարտական գործողությունների վալրերում: Փոխանակ համարձակ վերախմբավորումներ կատարելու և վճռական մարտական գործողություններ սկսելու, զորամասերը կենտրոնացվեցին Բաղլաբունու շրջանում գումարտակներով և նույնիսկ վաշտերով, վրդաշնականները հնարավորու-

թյուն ստացավ սկսել ակտիվ գործողություններ և նախաձեռնություններ իր ձեռքն առնել: Մեր զորքերը շարժվում էին յերեք կողմից: Քանաքեռի, Շորբուլաղի և Աղբաղի կողմից: Հայկական բրիգադը կենտրոնացվում էր Աղբաղի շրջանում հետևյալ կարգով. ապրտամբության առաջին որերին ուղարկվեց յերկրորդ գունդը, սակայն դաշնականները Յերևանի կողմից լետ մղեցին գունդը: Ոգնություն կանչվեց 3-րդ գնդի մի գումարտակը և հեծյալ հետախուզները, իսկ հետո նաև ամբողջ գունդը: Նույն ձեռով տեղի ունեցավ նաև 2-րդ բրիգադի ուժերի կենտրոնացումը Աշտարակից ելմիածին, վրդաշնականներին հնարավորություն տրվեց զինաթափել այդ բրիգադի մնացած զորամասերը:

Այդպիսով մենք չկարողացանք հաղկավոր մոմենտին Բաղլաբունու շրջանում կենտրոնացնել բավականաչափ ուժեր աստամբության ճնշման համար: Յեթե դրան ավելացնենք նաև այն, վրդաշնականները տրվել են պասսիվ խնդիրներ, ապա պատկերը պարզ կլինի:

Յերևանի գրավման նախորդակին կարմիր զորամասերին հրաման է տրվում «թողնել, վրդաշնականներին մոտենա Յերևան քաղաքին, նրան կտրել իր բազալից և ղեկավար որդաններից—շտարից ու վոչընչացները»: Խնդրի հենց այդպիսի առաջադրումը մեր զորամասերին մատնեց պարտություն: Այդպիսով վճռական կետում և վճռական մոմենտին մեր ուժերի անհրաժեշտ գերակշռում չստեղծվեց: Լեռնային խոսելով ապրտամբության մասին, ավել է մի շարք կանոններ, վրդաշնականները մեծապես օգտագործում են նաև ապստամբությունը ճնշող գործողություններին: Վրդաշնականները.—

1. «Անհրաժեշտ է ստեղծել ուժերի մեծ գերակշռութիւն» վճռական կետում, վճռական մոմէնտին, վորովհետեւ ալլապես հակառակորդը, վորն ունի ավելի լավ պատրաստութիւն և կազմակերպութիւն, կոչընչացնի ապստամբներին:

2. Քանի վոր ապստամբութիւնն սկսվել է, պետք է գործել խոշորագույն վճռականութեամբ և անպատճառ ու անպայման անցնել հարձակման: Պաշտպանութիւնը զինված ապստամբութեան հաժար մահ է:

3. Պետք է աշխատել հակառակորդին հանկարծակի բերել, հարձակվել աչն մոմէնտին, յերբ նրա զորքերը ցիր ու ցան են:

4. Պետք է աշխատել յուրաքանչյուր որ ունենալ թեկուզ փոքր հաջողութիւններ (կարելի չէ ասել յուրաքանչյուր ժամ, յեթե խոսքը վերաբերում է մի քաղաքի), ինչ գնով ել լինի պահպանելով «բարոյական գերակշռութիւն»:

«Այդպես է դրվում խնդիրը, վորը պահանջում է հմտութիւն և յեռապատիկ համարձակութիւն»: Այդպիսով այդ կանոնների անտեսումը և, վոր գլխավորն է՝ վոչ բավարար վճռականութիւնն աչն հետևանքն ունեցան, վոր մեր զորքերն ստիպված յեղան նահանջել:

Կարմիր զորամասերի ռազմական և քաղաքական ղեկավարութիւնը հաշվի առնելով իր սխալները, կարողացավ ճիշտ կերպով գնահատել մեր պաշտպանութեան բնագիծը և մեծ հմտութեամբ ղեկավարել զորամասերը քաղաքացիական պատերազմի առաջին շրջանում: Նահանջը և Բոյուք-Վեդի—Սոր-վիրապի գծում պաշտպանութեան ղերք բռնելը միանգամայն ճիշտ էր

և յերևում էր մի շարք քաղաքական և տակտիկական նկատառումներից: Ղամաբլի շրջանի ազգաբնակչութիւնը, վորտեղ գտնվում էր Հայկական բրիգադը իր ունևոր և կուլակ խավերով, ուժեղ և սերտ կերպով կապված էր դաշնակ խմբապետների հետ: Նրանք կարող էին ամեն մի բոլոր մեզ հարվածել թիկունքից, դրա համար ել մեր հիմնական խնդիրն էր անցնել այդ գծի մյուս կողմը: Այդ շրջանը շատ անբարենպաստ էր նաև ռազմա-տակտիկական տեսակետից. դա մի հարթութիւն է՝ ծածկված այգիներով, վորը մեր աջ թևի վորոնք կդժվարացնէին մեր պաշտպանութեան կազմակերպումը: Իսկ Բոյուք-Վեդու շրջանը մի բնական իշխող կետ է, վորը թևերում հենվում է բարձունքների վրա: Այդ պլանդարմի մեջտեղով անցնում է լեռնաթուղին, վորը մեր լեռնու զրահագնացքներին հնարավորութիւն էր տալիս պաշտպանութիւնն ուժեղացնել իրենց կրակով:

Յերևանի վրա կատարված առաջին հարձակումն ունեցավ խոշոր ռազմական և քաղաքական հաջողութիւն: Հայաստանի կառավարութիւնը և գլխավոր հրամանատարութիւնը համոզվեցին, վոր զորքերը քաղաքականապես կայուն են և մարտունակ: Այդ հարձակումը դաշնակների կողմից գրավված շրջանների աշխատավորներին նույնպես ցույց տվեց, վոր մենք կանք, և նրանց մեջ մեր վերադարձի հույսերն ավելի ամրապնդվեցին: Առաջին հարձակումից հետո կատարված նահանջի պատճառները գլխավորապես տակտիկական նկատառումներն էին: Այն նեղ միջոցները, վորոնց մեջ ստիպված էին գործել կարմիր զորամասերը,

մեզ համար հետևյալ անբարենպաստ հատկութիւններն ունեն. 10—16 կիլոմետր լայնութիւն ունեցող հարթութիւնը ձախ թևով հենվում եր Արաքս գետին և մեզ համար անվտանգ եր դաշնակների կողմից, իսկ աջ թևով հենվում եր այդ հարթութեան վրա իշխող սարերին: Աղբաշ—Ղամարլվի շրջանում թշնամու հարձակման և աջ կողմից շրջանցում կատարելու սպառնալիքն ամբողջ քաղաքացիական պատերազմի շրջանում կախված եր մեր գլխին:

Յերևանի վրա կատարված 2-րդ հարձակումը, վորը համաձայնեցված եր 11-րդ բանակի հրամանատարութեան հետ, նույնպես պսակվեց ռազմական հաջողութեամբ, չնայած այն բոլոր բարենպաստ պայմաններին, վորի մեջ գործում էին դաշնակները, այն է՝ տակտիկական առավելութիւնները, ամուր թիկունքը, ռեզերվների առկայութիւնը, բաւականաչափ ռազմամթերք և այլն: Իսկ մենք չունեինք թիկունք, չկային ռեզերվներ մարտերի ժամանակ տված կորուստները լրացնելու համար (սպանվածներ, վիրավորներ, հիվանդներ), զորքերը հանգիստ չունեին: Ահա թե ինչու յերկրորդ հարձակումն անհամեմատ ավելի լարված և համառ եր: 2-րդ նահանջը ևս մենք կատարեցինք կրկին և գլխավորապես շնորհիվ դաշնակների տակտիկական առավելութիւնների, ինչպես և յեղնելով մեր զորամասերին հանգիստ տալու և նրանց կարգի բերելու անհրաժեշտութիւնից, մանավանդ վոր 11-րդ բանակի հարձակում գործող շոկատը դանդաղում եր: Մեր զորամասերը մեծ դիմացկունութիւն ցուցաբերեցին դաշնակների կողմից մեր դիրքերի վրա մարտի 8-ին և 22-ին կատարված յերկու հարձակումների ժա-

մանակ: Այդ յերկու հարձակումներն ել, վորոնցից առաջինի նպատակն եր վերջնականապես ջախջախել մեր ուժերը, իսկ յերկրորդին՝ դաշնակների համար ճանապարհ բացել դեպի Դարալագյազ, մեր կողմից յենթարկվեցին վճռական հակահարվածի, վորի հետևանքով ել դաշնակները նահանջեցին մեծ կորուստներ տալով:

Այն շրջանը, վորտեղ տեղավորված էին մեր զորքերը, գտնվում եր բարդ քաղաքական պայմաններում: Բոյուք-Վեդիի շրջանի բնակիչները թյուրքեր էին, վորոնց դեռ մի քանի ամիս առաջ դաշնակցականները մատնել էին հրի և սրի, ստեղծելով ուժեղ ազգային մատնութիւն: Անհրաժեշտ եր մասսային ճիշտ կողմոստելութիւն: Անհրաժեշտ հարցերում և ձեռնարկել մի շարք միջոցներ՝ ուժեղացնելով կարմիր զորամասերի ու թյուրք աշխատավորութեան ինտերնացիոնալ համերաշխութիւնն ու կապը: Այդ տեսակետից ինչպես քաղաքական ղեկավարութիւնը, այնպես ել զորքերն իրենց կոչման բարձրութեան վրա գտնվեցին: Դեռ ավելին: Այն համակրանքը և ոգնութիւնը, վոր մեզ ցույց տվին թյուրք աշխատավոր մասսաները, հանդիսացաւ մեր հաղթանակների կարևորագույն պաշմաններից մեկը: Մեր կոչով մեզ ոգնութեան հասավ հայտնի թյուրք պարտիզան Աբաս Կուլի բեկը՝ 300 հոգուց բաղկացած իր հեծյալ և հետևակ խմբով («Կարմիր թաքո»)։ Շնորհիվ նրա խիստ գնահատելի ծաւորութիւնների և մարտական գործողութիւնների, մեր զորքերի համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ, և մերոնք ապահովվեցին թեւ և թիկունքի կողմից: Թվում եր, թե դաշնակների անսպասելի հա-

Չօղությունները՝ Յերեանի գրավումը նրանց կողմից, մեր նահանջը դեպի Բոյուք-Վեդի, ինչպես և ուրիշ տիվ պարագայի անորոշութիւնը, պետք է բացասական կերպով անդրադառնային մեր մարտիկների բարոյա-քաղաքական դրութեան վրա: Մակայն ալդպիսի բան չպատահեց: Պաշտպանողական զիրք բռնելով, մեր զորամասերը կարգի բերելով մենք հնարավորութիւն ստացանք ավելի ևս բարձրացնել և ամրապնդել մարտիկների վոգին ու ստեղծել այն ենտուզիազմը, վորով կարմիր-բանակայինները կռիւնքին քաղաքացիական պատերազմի ամբողջ ընթացքում: Այստեղ պրակտիկայում ապացուցվեց, վոր հեղափոխական պատերազմը, չէրը նա իսկապես գրավում և շահագրգռում է ճշմարտ աշխատավոր մասսաներին, հրաշքներ գործելու լեռանդ և ընդունակութիւնն է առաջացնում» (Լենին): «Ռուսաստանի քաղաքացիակ. պատերազմի փորձը ցուց տվեց, թե ինչպես քաղաքացիական պատերազմի բոցերում հեղափոխական ենտուզիազմի զարգացման հետ միասին ստեղծվում է ուժեղ ներքին գոտեպնդում» (Լենին): Այդ վոգեւորութիւնը և յեռանդը, այդ ներքին գոտեպնդումը Հայաստանի քաղաքացիական պատերազմում հանդիսացավ այն հիմնական գործոնը, վորը նյութեց մեր հաղթանակը դասակարգային թշնամու դեմ: Մարտիկների քաղաքական տրամադրութիւնը այնքան բարձր էր, վոր պայքարի ամենաանբարենպաստ պայմաններում (գրավել էինք մի նեղ շրջան, ամեն ինչից կտրված, դաշնակների համեմատութեամբ ունեւինք քիչ զորքեր, թիկունքն ապահ. վ չէր), ամենակրիտիկական մոմենտներում կարմիր զորամասերը հայտարարում էին արիութիւն, չկրելով վոչ մի

պարտութիւն: Դաշնակների դեմ յեղած դասակարգային ատեւութիւնն այնքան մեծ էր, վոր մեկ ու կես ամսվա ընթացքում չեղավ վոչ մի դեպք, վորպեսզի կարմիր-բանակայինները խմբովին կամ անհատապես անցնէին դաշնակների կողմը:

Այստեղ անհրաժեշտ է հիշել նաև հրամանատարների և քաղաշխատողների հիմնական մասսայի անձնագոհ և հերոսական աշխատանքը, վորոնք շաղախող տարր հանդիսացան կարմիր-բանակային մասսայի և զորամասերի համար: Հիմնականում կազմված լինելով ստորիններից (նախկին զինվորներ և յնթասպաներ), հրամկազմն իր դասակարգային գիտակցութեամբ ապահովում էր մարտական հաջողութիւնները: Նրանց հետ միասին կռվում էր դաշնակցական բանակի նախկին սպաների մի փոքրիկ մասը, վորը նվիրված էր խորհրդային իշխանութեանը և իր ամբողջ գիտութիւնն ու յեռանդը ծառայեցնում էր քաղաքացիական պատերազմի ոգտին: Դրա միանգամայն հակապատկերն էին դաշնակների զորամասերը: Նրանց մեջ բայառութիւն էր կազմում դաշնակների փոքրաթիվ ֆաշիստական «գվարդիան» (խմբապետները և մասնաւորները), ապադասակարգայնացած տարրեր, վորոնք ուռճանում էին ի հաշիվ Հայաստանի աշխատավոր մասսաների սովամահութեան և գաղթականութեան և ազգամիջյան պատերազմներում թալաններ կատարելով: Նույնիսկ քաղաքացիական պատերազմի սուր մոմենտին տարածված էր այն կարծիքը, վոր «դաշնակների նախկին կանոնավոր բանակի զինվորները բայելեիկների դեմ չեն կռվում»: Այդ տեսակետից մեզ մոտ նույն դրութիւնն էր, ինչ վոր Ռուսաստանի քաղա-

քաղաքական պատերազմում: Լենինն ասում է. «Հենց վոր նա (Վերանգելը) փորձում եր մոբիլիզացիայի լեն-թարկել գլուղացիական ազգաբնակչությանը ժողովրդ-դական բանակ ստեղծելու համար, նրա հաջողություն-ները վեր ելին ածվում պարտություն, վորովհետև գլու-ղացիական զորքերը չերբեք չեն կարող կողք-կողքի կռվել վերանգելյան սպայական զորքերի հետ»: Տվյալ դեպքում խմբապետական զորքերի հետ պատահեց նույ-նը: Քաղաքացիական պատերազմի ընթացքում լեղյան մի շարք դեպքեր, չերբեք դաշնակցական զորքերը խմ-բովին կամ անհատական կերպով անցան մեր կողմը: Բացի դրանից մեզ մոտ անցան մի քանի միավորներ իրենց հրամազմով: Առաջին շրջանում մեր կողմն ան-ցան նախկին 4-րդ գնդի գնդացիային վաշտը և մի գումարտակը: Դաշնակցական զորքերի անցումներն չե-ղել են նաև ուրիշ ճակատներում: Այդ անցումներն ար-տացոլում ելին գլուղացիություն լայն աշխատավորա-կան մասսաների տրամադրություններն ընդդեմ դաշ-նակցական տիրապետության:

Հայաստանի քաղաքացիական պատերազմը խո-շոր քաղաքական նշանակություն ունեցավ աշխատա-վոր մասսաներին դաշնակցների դեմ անհաշտ պայքարի վորով դաստիարակելու տեսակետից: Յեթե ապստամ-բության առաջին օրերին դաշնակցները կարողացան իրենց լուղունգներով գրավել Հայաստանի մանր-բուր-ժուական և գլուղացիական մասսաների վորոշ խավե-րը, ապա հիասթափումը շատ շուտով վրա հասավ: Դաշնակցական ամբողջ ագիտացիան, վորն անց եր կացվում ազգայնական և կրոնական լուղունգներով մի-ջոցով, ինչպես և բայշեխների «գաղանությունների»

մասին լուսանքներ տարածելու միջոցով, արդեն ա-ռաջին իսկ օրերում կորցնում են իրենց ազդեցությու-նը: Հայաստանի քաղաքացիական պատերազմը, ինչ-պես և մեր առաջխաղացումը Ղամարլի և Դարալա-գյազի շրջաններում, ուժեղ դասակարգային շերտա-վորման գործոն հանդիսացավ գլուղացիության մեջ. բատրակ-չքավորական խավերը միջակների հիմնական մասսաների հետ միասին, հանձինս կարմիր բանակի, տեսնում ելին իրենց ազատագրման դրոշմ, տեսնում ելին իրենց ազատագրումը ստրկացնողներից և շահա-գործողներից, կուլակներից և սպեկուլյանտներից, խմ-բապետներից և դաշնակցներից:

Քաղաքացիական պատերազմի շրջանում մեր գլու-խավոր դժվարություններից մեկն եր թիկունքի կազ-մակերպման, ազգամթերք (մանավանդ արկեր) և սննդամթերք հայթայթելու հարցը: Ուղղամթերքի սահմանափակ քանակը մեզ հարկադրում եր խոշորա-գույն տնտեսում կատարել և բոլորովին ել պատահա-կան չե մարտի 10-ին զորքերին տրված հրամանը, վո-րը ասում է՝ «ամբողջ հրամկազմը պետք է հետևի, վոր-պեսզի արկերը ծախսվեն տնտեսումով և արդյունա-վետ կերպով: Հրետանու և մարտկոցների պետերին հսկել կրակի դիսքիպլինայի խիստ պահպանության վրա և կրակի բացումը կատարել հրամանով»: Այդ հայտնի լեռ նաև դաշնակցների հրամանատարությունը, և դաշնակցներն այդ մասին հրամանով հայտնի ելին իրենց զորքերին, գինվորներին մարտական վորդին բարձ-րացնելու համար: Մեր կողմից Արարատ կայաբա-նում կազմակերպված ազգամթերքի արհեստանոցը կի-սամիջոց հանդիսացավ, չկարողանալով լուծել ազգա-

մթերքի հալթալթման պրորբեմը: Ռազմամթերքի մատակարարման միջոցներից մեկը հանդիսանում էր հակառակորդից վերցրած ռազմական ավարը: Մեծ ելին դժվարութիւնները նաև պարենավորման բնագավառում: Մարտի 18-ին հրաման արձակվեց մարտիկներին տրվող հացի քանակը պակսեցնելու—մեկ ֆունտ դարձնելու մասին: Միայն վերջին որերում մենք ինքնաթիռով վոսկի ստացանք՝ Նախիջևանում և Պարսկաստանում հաց գնելու համար, վորի շնորհիվ և մասամբ վերացան դժվարութիւնները: Ինքնաթիռի ժամանումը մեծ նշանակութիւն ունեցավ մարտիկների քաղաքական-բարոյական տրամադրութեան բարձրացման տեսակետից, վորովհետև կտրված լինելով ամբողջ աշխարհից, մեր զորամասերը հուսադրվեցին շուտափուլթ ոգնութեան մասին: Դրանից մի շաբաթ հետո Յերևանը գրավվեց:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ քաղաքական աշխատանքը տարվում էր հետևյալ ուղղութեամբ. մարտիկի դաստիարակութիւնը դասակարգային թշնամիների դեմ անհաշտ պայքար մղելու վոգով (դաշնականների, խմբապետների, մանդերիստների), ինտերնացիոնալ միասնականութիւն և կապ թյուրք աշխատավոր մասսաների հետ, մարտիկների քաղաքական-բարոյական տրամադրութեան բարձրացում, պաշտօն վերաբերմունք հակառակորդի գերիների նկատմամբ և աշխատանք տեղական ազգաբնակչութեան մեջ: Կուսակցական-քաղաքական աշխատանքի ղեկավարութիւնն իրագործվում էր զորամասերի կոմիսսարների և գումարտակների զինկոմիների միջոցով, ինչպես և քաղղեկների միջոցով (քաղաքացիական պատերազմի

շրջանում պատասխանատու կուսակցական գործիչները նշանակված էին քաղղեկներ): Թեպետ և կուսակցական բջիջները սակավաթիվ էին, սակայն ունեյին մեծ մարտական և քաղաքական հեղինակութիւն մասսաների մեջ:

Թուրքիկներ և կոչեր հրատարակելու համար վոյսի տեխնիկական հնարավորութիւն չկար: Միայն զորքերին տրվող հրամանները պարունակում էին քաղաքական ելեմենտներ: Գործադրվում էր մարտիկների հետ զրուցելու մեթոդը, և հրամանատարի ու կոմսոնիստի անձնական որինակը մարտական պայմաններում վճռական նշանակութիւն ուներ: Մեծ աշխատանք էր կատարվում մարտական պարագայի բացատրման գծով, մեր նահանջների պատճառների բացատրման, մարտիկների քաղաքական-բարոյական դրութեան ամրապնդման համար: Մեծ քաղաքական նշանակութիւն ունեցան հրամանատարութեան կողմից ամեն մի հարձակումից և նահանջից առաջ կազմակերպվող թուրքիկ միտինգները: Յերկրորդ հարձակման նախորդյակին կազմակերպվեց միտինգ Հայաստանի Հեղկոմի մասնակցութեամբ: Չնայած քաղաքական աշխատանքի բազմազան ձևերի բացակայութեանը, մենք կարողացանք մարտիկներին դաստիարակել դաշնականների դեմ անհաշտ պայքար մղելու վոգով և բարձր պահել մարտիկների քաղաքական-բարոյական տրամադրութիւնը:

Քաղաքացիական պատերազմի լերկորդ շրջանում (հարձակում Դարալագյազի վրա) ռազմաքաղաքական պարագան մեզ համար բարենպաստ էր: Մենք ունեյինք ամուր թիկունք, և անհրաժեշտ նլութեբը մատակարարվում էին սիստեմատիկ կերպով: Քաղ-

աշխատանքն ստացավ ավելի պլանաչափ բնույթ՝ զբ-
րույցներն սկսեցին կազմակերպվել ավելի հաճախ, զո-
րամասերում ստացվում էին թերթեր, պլակատներ,
թուղթիկներ և նույնիսկ գրքեր: Բեռլինը և Մալիշկա
գյուղերում կազմակերպվեց ակումբ: Մենք դաշնակնե-
րի դեմ հաղթություններ ելինք տանում առանց մեծ
գովարությունների: Առանձնապես մեծ աշխատանք
ծավալեցինք ազգաբնակչության մեջ: Շատ գյուղերում
զորամասերի ուժերով ստեղծվեցին խրճիթ-ընթերցա-
րաններ, վորոնց մատակարարում էին գրականու-
թյուն և այլն: Գյուղացիության համար կազմակերպ-
վեցին յերեկո - ներկայացումներ: Յեւ վերջապես
կարմիր-բանակայինները մեծ ոգնություն ցույց տվին
գյուղացիության չքավոր խավերին՝ այգիների և հո-
ղերի մշակման գործում: Պետք է նշել նաև մեր աշ-
խատանքը հակառակորդի զորքերի մեջ Դարալագյա-
զում: Դաշնակների կողմից գերի բռնված մեր կարմիր-
բանակայինները լավ ազդեցություններ էին հանդիսա-
նում զինվորների մեջ և այդ ուղղությամբ խոշոր աշ-
խատանք էին ծավալում: Այդ ազդեցության ուժեղաց-
րեց մանր-բուրժուական տատանումները, և բավական
եք լինում մեր զորքերի մի հարվածը, ու դաշնակների
զինվորները գերի էին ընկնում մեզ մոտ: Յեղան
«յեղբայրացման» դեպքեր, բանակցություններ զին-
վորների հետ նրանց հալածատների կողմից, նամակ-
ների ուղարկում, դաշնակների զինվորներին մեր կող-
մը գրավելու համար: Այդպիսով մենք զգալի չափով
թուլացնում էինք դաշնակների ազդեցությունը նրանց
վրա և ապահովում հակառակորդի զորքերի հեշտ ջախ-
ջախումը: Մեր հասցրած մի հարվածով գրավվեց յեր-

կու հրանոթից բաղկացած մի գործող մարտկառ, 8-12
գնդացիք և 1500—1800 զբրիններ: Միայն վորոշ մո-
մենտում, յերբ կատարվեց բարձր տարիք ունեցող
կարմիր-բանակայինների զորացրումը և սկսվեցին
խորհրդային կառավարության բանակցությունները
դաշնակների հետ՝ Զանգեզուրի հարցն առանց արյուն-
հեղության լուծելու համար, հրամանատարությունը
վորոշ չափով թուլացրեց իր զգոնությունը, վորով և
բացատրվում է մեր ժամանակավոր անհաջողությունը
և նահանջը Դարալագյազից: Դաշնակցական խմբա-
պետներն ոգտվելով նրանից, վոր մեր զորամասերը
ցրված էլին, լավ ծանոթ լինելով տեղանքի հետ, տե-
ղի կուլակների ոգնությամբ հարձակում գործեցին մեր
բրիգադի վրա, վորը նպաստեց նրանց ժամանակավոր
«հաջողությանը»: Սակայն շնորհիվ ձեռք առած մի-
ջոցների, զրությունը շուտով վերականգնվեց:

Յեւ այդպես, քաղաքացիական պատերազմի ա-
մենադժվարին և պատասխանատու շրջանում (փետր-
վարի 17-ից մինչև ապրիլի 2-ը) կարմիր զորքերի հը-
րամանատարությունը հաջվի առնելով ապստամբու-
թյան ժամանակ Յերևանը թողնելու իր սխալը, ռազ-
մական և քաղաքական տեսակետից միանգամայն ճիշտ
գնահատեց Բոյուք-Վեդի—Խոր-վիրապ պլացդարմի նը-
ջանակությունը և մեծ հմտությամբ կարողացավ այն-
տեղ կազմակերպել պաշտպանություն, յերկու անգամ
անցնելով հարձակման: Շնորհիվ հրամանատարական
կազմի և հասակցական կազմակերպության անձնա-
զոր և հերոսական աշխատանքի, զորքերը վոգեկորվե-
ցին դասակարգային թշնամու դեմ անհաշտ պայքար
մղելու համար, լիակատար հաղթանակ տանելով նրա
դեմ:

Քաղաքացիական պատերազմը մտավ Հայաստանի պրոլետարական և աշխատավոր մասնաների դասակարգային պայքարի յերկաթե զինանոցը: Կարմիր դրամասների կայունությունը և վոզեորությունն այն ժամանակ, յերբ նրանք բոլոր կողմերից շրջապատված լինելով, մարտնչում էին դաշնակների դեմ, պետք է որինակ հանդիսանա Հայկական դիվիզիայի մարտիկների համար մեր ապագա ընդհարումների ժամանակ, քանի վոր պատերազմի վտանգը դեռ չի վերացված, նա գոյություն ունի և սրեցոր ավելի յե ուժեղանում: Անգլո-Ֆրանսիական իմպերիալիզմը ինտերվենցիա յե պատրաստում: Այդ պատրաստության գործում ակտիվ կերպով մասնակցում է նրանց գործակալ Դաշնակցություն կուսակցությունը:

Հայկական դիվիզիան և Հայաստանի աշխատավորությունը պետք է պատրաստ լինեն ամեն բոլոր վճռական հակահարված տալու համաշխարհային իմպերիալիզմին և նրա լակեյ դաշնակցությանը:



Հրատ. № 1490

Իրառեպ. № 6147 (բ) Պատ. № 61 Տիրաժ 5000

Պետհրատի . . . արդ. տպարան Յերևանում

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425494